ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆ

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

Տնօրենի հետ միասին առաջնային պատասխանատվություն է կրում սովորողի ԱՈՒՊ-ի գործնական կիրառման գործընթացներում՝ հանդիսանալով այդ բոլոր աշխատանքների և ԱՈՒՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և թիմային համագործակցության գլխավոր համակարգողը: Նա՝

- կազմակերպում է ԱՈՒՊ-ի մշակման գործընթացը՝ ներգարվելով բոլոր անհրաժեշտ անձնանց ու մասնագետներին,
- մասնակցում է ԱՈՒՊ-ի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին,
- համակարգում է ԱՈՒՊ-ի աշխատանքները՝ հստակ ներկայացնելով ԱՈՒՊ-ի խմբի յուրաքանչյուր անդամի դերը, պարտականությունն ու համագործակցությունը՝ ԱՈՒՊ-ի տարեկան նպատակների և խնդիրների իրականացման հարցերում,
- ապահովում է աշակերտի ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ գնահատման գործընթացի պատշաճ իրականացումը,
- ապահովում է, որպեսզի պատշաճ իրականացվեն ԱՈՒՊ-ով առաջարկված և դպրոցի տնօրենի կողմից հաստատված կրթության առանձնահատուկ պայմանների հարմարեցումների և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրումը սովորողին,
- Իր տնօրինության տակ է պահում բոլոր ԱՈՒՊ-ները և ապահովում դրանցում տեղ գտած տեղեկատվության գաղտնիությունը՝ առանց ծնողի համաձայնության այն չտրամադրելով երրորդ անձի,
- հրավիրում և անձամբ համակարգում է աշակերտի ԱՈՒՊ-ի իրականացման խմբի անդամների ամսական ժողովները: